Համակարգչային և պատճենահանման սարքերի և սարքավորումների փոխման և օժանդակ նյութերի /քարտրիջների/ լիցքավորման

# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2022 /6

ք. Վանաձոր <<15….>>…03………2022թ.

<<Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ- ի դեմս տնօրեն Ն.Ա.Սահակյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և Միհրան Գումրոյան ԱՁ, ի դեմս ընկերության տնօրեն Մ.Գումրոյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ **Տեխնիկական բնութագրով նախատեսված համակարգչային և պատճենահանման սարքերի փոխում ,օժանդակ նյութեր /քարտրիջների լիցքավորում** (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ծառայություն է մատուցում Գնորդին:

2.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան :

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատուցելու դեպքում հրաժարվել Ծառայությունից.

3.1.2 Եթե մատուցվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարատավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունը այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայյամանգիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայյամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցվել է անպատշաճ որակի Ծառայություն, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը,

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սուն պայմանագրին համապատասխան մատուցված ծառայության ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի Ծառայությունից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ծառայության որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ծառայության բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Գնորդ | Վաճառող |
|---|---|
| <Վանաձորի Գրիբոյեդովի անվ. N11 ավագ դպրոց> | Սերգեյ Գումրույան ԱՁ |
| ՊՈԱԿ,Ազատամարտիկների պ1 | ք.Վանաձոր, Տ .Մ ե ծ ի 34 |
| Կենտրոնական գանձապետարան | h/h 163138040650 |
| 900238000534 | Հայէկոնոմ բանկ |
| ՉՎՅՅ06909818 | ------------------ Ս.Գումրույան |
| էլ.փոստ: vanadzor11@mail.ru | Կ.Տ. |
| Տնօրեն՝ Ն.Ա.Սահակյան Կ.Տ | |